

# ԴՐՕՇԱԿ



„ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

## 1895-1896

1895 թվականը Հայ ժողովրդի կեանքի ամենատխուր թվականներից է. նա շաղախուած է արիւնով ու կրակով. 1895 թվականը Հայ ժողովրդի համար սգոյ թվական էր:

Հայ ժողովուրդը Սասունի ջարդը կրելուց յետոյ մեծ յոյսերով ուր դրեց այդ թվականը. թմրած, թուլացած ու վհատած ժողովուրդը ուրի էր կանգնում, յեղափոխական ուժեղ, խոր գիտակցութեամբ սկսում էր զգալ ու ապրել, սկսում էր կեանք ունենալ: Ամեն տեղ տիրում էր ոգևորութիւն, սառած սրտերը ետ էին գալիս, թմրած ուղեղները բորբոքում—ամենքը գարուն էին երգում...

Եւ այս ընդհանուր խնդրութիւնը քանի գնում՝ զարգանում, աճում էր շնորհիւ տէրրօրիստական ու հայգուկային յաջող գործողութիւնների: Հմտութեամբ մղւած կռիւը սարսափեցրել էր թշնամուն, իսկ դիպլոմատիային նեղն էր լծել... Յաղթութիւնը ակնյայտնի էր, մի քայլ առաջ պիտի անցնէինք, երբ առաջ եկաւ մի գործ, որ ըստ էության պահանջը էր և իրերի դրութիւնը ծանրացրեց՝ առիթ տալով թշնամուն օգտել հանգամանքից և իւր չարաննեզ ծրագիրը, ընդհանուր կոտորածը իրագործել:

1895 թ. այնքան գառն, այնքան կսկծեցուցիչ է, որ մեզ թոյլ չէ տալիս մի հայեացք ձգել մի շարք նշանաւոր գործերի վրայ, որոնք պարբերաբար տեղի ունեցան առաջին կիսամեակում և շարունակում են խոստովանում ենք, տեղի ունեցած ու ունեցող գործերը թշնամու կոտորածի առջև չնչին են.—

Թշնամին կոտորեց և ամենամանխնայ, սարսափելի կերպով մի քանի շաբաթւայ մէջ տաճկահայ ժողովուրդը տւաւ 80-100 հազար զոհ: Թշնամին չբաւականանալով կոտորել հրդեհեց, աւերեց, թալանեց ժողովրդի ունեցած-չունեցածը ու կենդանի մնացած մասը Դասնեց սովի, որ սա շարունակէ իւր սկսածը, և այ-

սօր աւերակների մէջ մերկ ու սոված թափառում են տանեակ հազարաւոր մարդկային էակներ, փոքր ու մեծ, կին ու տղամարդ. իսկ քանի՛ն են մեռնում, այդ միայն գիտէ նին հողը, որ իւր գիրկն է առնում այդ թշուառ ու տանջած դիակները:

Այս սարսափելի տեսարանի առջև մենք չենք ընկճում, չենք յուսահատուում—այդ յեղափոխականի գործ չէ, այդ վատութիւն ու դաւաճանութիւն է: Խոստովանել ճշմարտութիւնը, չխաբել ոչ ժողովրդին և ոչ էլ իրեն, այդ չէ նշանակում թուլանալ, ընկնել. ոչ, այդ մեր բաժինը չէ: Հենց անցեալ տարի՝ այս ժամանակ, երբ մենք մի հայեացք էինք ձգում անցեալի վրայ, ասել ենք—«կոտորել՝ չէ նշանակում յաղթել», և մենք այսօր դարձեալ կը կրկնենք նոյնը: Թշնամին կոտորել է, Հայ ժողովուրդն էլ իւր կողմից է նրան հարւածներ տւել. բայց թշնամուն ուժեղ է. նա կոտորել է: Կոտորել է, բայց չէ յաղթել, Հայ ժողովրդի ձեռքից չէ խել ապստամբական անարատ դրօշակը. նա բարձր ու ուժեղ է բռնած, նա կրկնի պատառ-պատառ եղած, կոխկրտած պիղծ թշնամու ոտերի տակ միմիայն վերջին հայի վերջին շնչի հետ:

Բայց ոչ, երբէք թշնամուն այդ չի յաջողել, Հայ ժողովուրդը անընկճելի է, նրա մէջ այնքան բարոյական ու կենսական ոյժ կայ: Ապստամբեան դրօշակը միշտ ծածանելու է Սասունի ու Սեպուհ լեռների գագաթին, ապստամբ Զէյթունի կրծքին—ապագան նրանն է, և մենք հրաւիրում ենք սգաւոր Հայ ժողովրդին հաւատ ունենալ ու աւելի ամուր սեղմել, ոյժ տալ նրան:

Այսպիսի մի ծանր ըրպէում, երբ Հայ ժողովուրդը մատնուած է ծայրայեղ թշուառութեան, երբ նա մենակ է մնացել ուժեղ թշնամու դիմաց, այսպիսի մի ծանր ըրպէում դարձեալ յեղափոխական կռիւը առաջ է մղւում. ժողովրդի յեղափոխական զաւակները հաւատարիմ են մնում իրենց կոչմանը, հաւատարիմ են մընում ապստամբական դրօշակին ու թշնամու հարւածների դիմաց կուրծք են բռնում:

Եւ որքան էլ 1895 թ. սգի ու ողբի թվական լինի, որքան էլ նրա յիշատակը դառնութեամբ ու անէծքով լնքը լնի, մենք մտնում ենք 96-ը յուսով ու հաւատով. ներկայ կռիւը դուցէ երկար կը տւի, թշնամին ներ-

կայ պայմաններում կարող է մեզ մի քանի հարւածներ ևս հասցնել, բայց նա յաղթող հանդիսանալ երբէք չէ կարող. նա կենսականութիւն չունի, նա իւր գոյութիւնը պարտական է ճակատագրին:

Մենք շատ լաւ ենք ճանաչում թշնամուն, գիտենք նրա ոյժը, գիտենք նրա առաւելութիւնն ու պակասութիւնները և որովհետեւ մենք նրան գիտենք, ճանաչում ենք, մեր կուրը կը լինի ոչ թէ անիմաստ, մշուշի մէջ, այլ չափած, կշռած, ինչպէս միշտ:

Եւ առաջ տանելով այդ կուրը, մենք յոյս ունինք յաղթող հանդիսանալ, մենք յոյս ունինք, որ թշնամուն կստիպենք զնջանել ու տեղի տալ, մենք կստիպենք թողնել կառավարութեան ղեկը ժողովուրդներին, որոնց են պատկանում իրաւունքը, դատը, խօսքը և հողը:

Հայ ժողովուրդ, այսպիսի յոյսերով փակենք դառն թւականը, այսպիսի յոյսերով մտնենք 96 թւականը. ձեռք ու թիկունք տանք և ճակատագրով ապրող թըշնամուն դէմ կուրելով՝ վրէժխնդիր լինենք հազարաւոր նահատակների, աւերակ դարձած երկրի համար:

Չողբանք, որ այսօր կան երկիրներ, ուր խնդում, ուրախանում են... չվհատուինք, որ մենք մտնում ենք 96 թւականը կրած ամենասարսափելի վէրք՝ սգաւոր ու տխուր, հազարաւոր վիրաւորեալների, քաղցածների և մերկերի հետ, չվհատուինք, այդ թուլութեան նշան է, դա յուսահատութիւն է. իսկ յուսահատել, կը նշանակէ ինքնասպանութիւն գործել, կը նշանակէ թշնամու ստերի տակ դնել իւր պատիւը, իւր ապագան. ոչ երբէք: Մահ կամ ազատութիւն, ահա ֆիակ եւքը. մենք չենք ստորանալ, մենք չենք թոյլ տալ, որ մեզ վրայ նային զգանքով ու արհամարանքով. մենք մեր հերոսական ընդդիմադրութեամբ, անհաւասար կուրի մէջ քաջութեամբ մարտնչելով կամ ազատութիւն ձեռք կը բերենք, կամ քաջութեամբ կընկնենք պատերազմի դաշտում՝ բիծ թողնելով մարդկութեան ճակատին... որ նրա դատապարտութեան նշանը կը լինի:

Մտնենք 1896 թւականը՝ վիրաւորած ու սրտի կրակիծով, բայց լի վրէժխնդրական ոգով ու արիութեամբ՝ աւելի ոյժ տալու ստորաքարը, գարշելի թշնամու դէմ մղած կուրին: Սուլթանի կառավարութեան ու մեր ճակատագիրը որոշողը կուրն է, կուրնք ամենալարած ուժերով, ամեն տեսակ միջոցներով. չպէտք է ոչինչ ինայել, պէտք է գործ դնենք, ինչ որ կայ մեր տրամադրութեան տակ—լինի ուումբ, լինի ատրճանակ թէ հրացան, լինի սուր թէ բահ. այս է պահանջում մեզնից «քաղաքակրթւած» ու «մարդաբեր» աշխարհը... այս են պահանջում մեր ներկան ու ապագան:

Զ Է Յ Թ Ո Ւ Ն Ի Ա Պ Ս Ս Ա Մ Բ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Ե Ն Ր Ո Պ Ա Վ Ա Ն Թ Ե Ր Թ Ե Ր Ի Յ

(Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր Կ Պ Ո Լ Ս Ի Յ)

22-ին Դեկ. Գերմանական զեսպանը Զէյթունի ապստամբներին կամ բնակիչներին ընդհանուր կոտորածի վերաբերմամբ՝ Դրանը նոր դիմումներ արաւ: Անգլիական զեսպանը ոյժ տաւ առաջինի ծանուցագրին: Բայց և այնպէս վախենում են, թէ Զէյթունի դաւառը արդէն աւերած լինին և հայերը կոտորած:

\* \*

24-ին Դեկ. Զէյթունի հայերը յարձակում գործեցին Հիշիլ թուրք դիւղին վրայ, թալանեցին, յետոյ այրեցին և 10 մարդ էլ սպանեցին:

—Ստէֆանի գործակալութեան Պոլսից քաշած մի հեռագիր հաղորդում է, որ վեց մեծ պետութիւնների զեսպանները առաջարկեցին Դրան իրենց աջակցութիւնը Զէյթունի ապստամբների հետ բանակցութեան մտնելու համար: Հայէպի Եւրոպական հիւպատոսները ապստամբավայրը պիտի ուղարկէին իբրև պատիրակ:

\* \*

25-ին Դեկ. Հալէպից ստացած տեղեկութիւնների համաձայն, կայսերական բանակները տիրել են Զէյթունին. ապստամբները փախել են լեռները:

\* \*

26-ին Դեկ. Աւստրիայի զեսպան պ. Քալիչէ յոյս յայտնեց սուլթանին՝ թէ նա ամենախիստ միջոցներ ձեռք չի առնիլ զէյթունցիների դէմ:

27-ին Դեկ. Պաշտօնական տեղեկութիւնների համաձայն, Զէյթունը գրաւելու ժամանակ՝ կուում ընկել են 2500 հայ և 250 թուրք:

\* \*

28-ին Դեկ. Զէյթունի մասին հակասական լուրեր են պատում. ոմանք ասում են՝ թէ մեծ կուր է տեղի ունեցել և 2500 հոգի մեռել են, իսկ միւսներն էլ թէ միայն ամրոցն է առնւել: Սակայն վերջին լուրերին նայելով՝ հաւանական է երևում, թէ թուրքերը գրաւել են Զէյթունի բոլոր կիրճերը և այդպիսով ապստամբներին զրկել են ապրուստի միջոցներից:

Դեսպանները խնդրել են Բ. Դոնից խնայել անպաշտպան փախստականներին, ինչպէս և կանանց:

\* \*

28-ին Դեկ. Կիսապաշտօնական աղբիւրից առնւած լուրերի համաձայն, թուրքերի ձեռքը ընկած է Զէյթունի զօրանոցը միայն:



Դ Ա Շ Ն Ա Կ Յ Ո Ւ Թ Ե Ա Ն

Հ Ա Յ Դ Ո Ւ Կ Ա Յ Ի Ն Խ Մ Բ Ի Կ Ռ Ի Ի Ը

Դ Է Լ Ի Պ Ա Պ Ա Յ Ո Ւ Մ

ԱՅա՛ երկու օր է Բասեն դաւառակի մէջ մեր ոտ կոխելը: Անոր սարսափելի վիճակը գեթ մասամբ կուզէի լոյս աշխարհ հանել, գրի առնելով կատարող չարութիւնները: Այս ըրպէս Դէլի-Պապայի քրդաց խուռն բազմութիւն սոված գայլերի պէս հայ գիւղերը շրջապատած հրացանի ձայներէն ականջնիս կը խլանայ, կը վազենք դէպի հրացան, դէպի մահ...

Արևը նոր էր ծագել, մեր հայդուկները, որք գիւղի բողորտիք պահապան էին, թշնամին տեսնելով, ձայն տւին՝ թէ «Ժամանակ է, եղբայրք, կամ մեռնիլ, կամ չթողնել, որ հայ ընտանիքն ու զաւակները թշնամու գիրկն ընկնին»։ մեր շրջակայ հայ գիւղերը բողորն էլ ոչնչացան, նոյնը կապառնայ այսօր և այս գիւղին, դէ ակաբոյրք, վատութեամբ չաղտոտենք մեր անունը ու պատիւը:

Երբ թշնամին շրջապատեց Տէլի-Պապա գիւղն և ըսկսաւ հրացանի որոտումներով յարձակման նշան տալ, ի մի ժողոված հայդուկները բաժնւեցին մի քանի խումբերի և գիւղի բողորտիք ամուր դիրք բռնելով, սկսեցին կարկառի պէս տեղացնել գնդակները թշնամու գլուխին: Երբ կռիւը սկսեց տաքանալ, երկու հայդուկ սկսեցին երգել՝

«Ազատութեան այն վառ սէրը  
Թող որոտայ մեր սրտում,  
Իմ հայրենեաց սուրբ անունը  
Ինձ պատերազմ է կանչում»:

Թշնամին թէև 500 հեծեալ չորս կողմից շրջապատած, բայց երբ տեսաւ հայ երիտասարդների անվեհեր սիրտը և քաջութեամբ կուրիւ, սկսաւ յետ նահանջել: Վերջապէս մինչև երեկոյեան արևը մտած ժամանակ քանիցս կատաղաբար յարձակւեցին և միշտ կորագլուխ յետս վերադարձան. յաղթութիւնը մերն էր:

Մէնք այլ ևս ոչ եւրոպայի խաբուսիկ յոյսերէն և ոչ թուրքի խորամանկութիւններէն կը խաբուիք, մենք գիտենք մեր ճանապարհը, միայն մեր հայ եղբայրք ու շարութիւնը կը հրաւիրենք դէպի մեզ, որ արեան և պատերազմի մէջ կը լողանք:

Օգնութիւն, օգնութիւն կը պոռանք, հայ եղբայրներ:—Արդեօք թշուառի ձայնին ու աղաղակին լսող կայ: Ներկայ ըրպէն կորսնցնել, ժողովուրդ մը կորսնցնել է:

Օգնեցէք մեզ այժմ կամ երբ էք:

Կ Ո Տ Ո Ր Ա Փ Ն Ե Ր

Կ Ա Ր Ի Ն

Կողովուրդ են, կոտորու՛մ են  
Աւերու՛մ են Հաւաստան:՝  
Ս: Սահարիան

I

Վերջին մի քանի ամիսների ընթացքում Հայկական հարցի ստացած այս կամ այն կերպարանափոխութիւնը առիթ է տալիս հազար ու մի ցաւալի մտածութիւնների. մի կողմ կանգնած է վայրագ սուլթանի գազանաբարոյ կառավարութիւնը՝ որը իր ձգձգելու և խաբելու աւանդական քաղաքականութեամբ կամենում է ոչնչացնել մի ամբողջ ազգի մարդկային ամենահասարակ իրաւունքները. միւս կողմ տեսնում եւս լպիրշ դիպլոմատիան, որը բաւականանում է միմիայն կոկորդիլոսի արտասոււնքներ թափելով և որը ականատես տարիներից ի վեր տանջող և շարշարող՝ մի բուռն ժողովրդի օրհասական ճգնաժամներին, այնուամենայնիւ դեռ անտարբեր զբաղւած է իւր ստոր և անաժօթ խաղերով. իսկ այս բոլորի դէմ յանդիման կանգնած է հայ անվեհեր յեղափոխականը, որը անհաւասար կուրի մէջ, կուրծքը բաց, շարունակ արեան գետեր է հոսեցնում՝ նշանաբան ունենալով «Ազատութիւն կամ մահ»:

Սուլթանի անարգ կառավարութիւնը, որը առժամանակ կարծէք իրերի վտանգաւոր դրութիւնից երկիւղ էր կրում և դրա համար չափազանց զգոյշ էր իւր քայլերի մէջ, այժմ համոզւած է, որ կարելի է լուսաւոր համարւած աշխարհին բովանդակ մարդկութեան ամօթաբեր փաստեր տալուց յետոյ դարձեալ մնալ անպատիժ, ձեռնարկեց այժմ իրագործել իւր վաղուցւայ կազմած ծրագիրը, այն է՝ անխնայ կոտորել հայ յերին Հայաստանում, խեղդել հայի յեղափոխական ոգին իւր երիտասարդ հասակում և դրանով վերցնել մէջտեղից այն կուսածաղիկը, որը կոչւում է Հայկական հարց: Հանգցնել յեղափոխական վառ կրակը, որը հեղզհետէ սպառնում է հրդեհի կերպարանք ստանալ մենք կատարելապէս համոզւած ենք, որ այդ չի յաջողիլ սուլթանի կառավարութեան. իսկ ինչ վերաբերում է կոտորելով ջնջելու սիստեմին, փաստը այս է, որ վերջին մէկ կամ մէկ ու կէս ամսան ընթացքում ասոճկահայերի թւից պակասեց առ նւագն 8-10000:

Սասնոյ գազանութիւնները այլևս անցնում են պատմութեան շարքը. այս ըրպէն մենք կանգնած ենք դեռ երեկ կատարւած այնպիսի թարմ կոտորածների առջև, որոնք մոռացնել են տալիս մեզ անցեալում պատահածները, այնքան սիրտ կտրատող են տեղի ունեցած փաստերը, այնքան հրէշաւոր և աներեւակայելի են ի

գործ գրւած գազանութիւնները:

Հայ մարդու գրութիւնը սարսափելի է ներկայումս Հայաստանում. ամեն կողմ դժոխք, ամեն կողմ սպանութիւն, ամեն տեղ կողոպուտ. կոտորած Պոլսում, Տրապիզոնում, կոտորած Երզնկայում, Բիթլիսում, Գերջանում, Բաքերդում, Մուշում և այլն, և այլն. և վերջապէս կոտորած Վարինում, որը (ի պարծանս թիւրք կառավարութեան) իւր տեսակի մէջ իբրև առաջինը և ամենափայլունը, կարող է սուլթանի կառավարութեան «Տայրական հոգածութեան, նրա շնորհքի, ազնուութեան, և ուժի» մասին գաղափար տալ անգութ, անխիղճ հանդիսատեսներին: Այս կոտորածը վերին աստիճանի եղբրական է և ձեռք գգուշանում ենք երկարապատում նկարագրութիւնից:

II

Վարինում հայերի և թուրքերի յարաբերութիւնը վերջին մի ամուսայ ընթացքում պարբերաբար տարածւող լուրերի շնորհիւ, հասել էր սաստիկ լարւած դրութեան. յեղափոխական շարժման իւրաքանչիւր փաստը յուզում, կատաղեցնում էր կառավարութեան և ֆանատիկոս մահմեդականներին, որոնք սպասում էին հայերի կողմից առիթի բոլոր ուժով վրէժխնդիր լինելու համար: Վարնեցիք զգում էին այդ և խոյս էին տալիս առհասարակ ընդհարումներ ունենալուց: Առանց պատահարի անցնում էին օրերը և ամեն դը կարծում էր՝ թէ երկրի զանազան մասերում սիստէմատիքաբար կատարւած կոտորածները տեղի չեն ունենալ Վարինում, ուր կառավարութիւնը ըստ երևոյթի ձեռք էր առել ազդու միջոցներ: Քաղաքում գտնւած զօրքը՝ հեծելազօր թէ հետևակ, զինւած Մարթիի հրացաններով, լաւագոյն ատրճանակներով, ամբողջ օրը մեծ խմբերով անց ու դարձ էր անում քաղաքի փողոցները և գլխաւորապէս այն մասերը, որոնք հայերով են բնակեցրած: Տրապիզոնի կոտորածում իրենց դերը փայլուն յաջողութեամբ վերջացնող լազերի հրոսակային խմբերը եկել հասել էին արդէն Վարնոյ շրջակաները և ամեն կողմ տարածել սարսափ. ճանապարհներին ուղեւորները, հայ, անկասկած, կողոպուտում էին և սպանւում, դրա համար էլ շրջականերում ապրող հայերի յարաբերութիւնը ընդհատւած էր բոլորովին քաղաքի հետ: 12 օր է անցել կոտորածից, և այժմ միայն պարզւում են հայերին կառավարութեան վաղօրօք սարքած մէքենայութիւնները. փաստ է այժմ, որ կառավարութիւնը իւր ժամանակին հրաւիրել է քաղաք Բասնի և Օվայի թուրք մեծամեծներին և հաղորդելով նրանց բարձրագոյն հրամանի մասին, հարկաւոր հրահանգները տւել է իւրեանց անելիքների վերաբերմամբ: Այս կարգադրութեան պէտք է վերագրել այն հանգամանքը, որ կոտորածից մի երկու օր առաջ քաղաք էր թափւել թուրք գիւղացիների ահագին բազմութիւն:

Որսորդները պատրաստ սպասում էին թէ երբ կը պլտորի ջուրը ձուկ որսալու համար: Առիթը սպասածից աւելի շուտ ներկայացաւ:

Ն Ա Մ Ա Կ Տ Ր Ա Պ Ի Զ Ո Ն Ի Յ

I

Սեպտեմբեր 26-ին (հ. տ.) Տրապիզոնի շրջակայ աւաններու և գիւղերու պաշտպանութիւններն, երբ կառավարութեան կողմէ զինւելով, կանոնաւոր զինւորներու հետ հայերուն վրայ յարձակեցան՝ վատաբար և ձեռքէ եկածին չափ չարիքներ գործեցին անգէն ժողովրդին, կուսակալ Գատրի պէյն՝ այլ ևս գոհ իր սարքած կեղտոտ գաւաղրութենէն, հետագրատունէն ալ հրաման ըրաւ, որ իսլամ գիւղացիք իրենց դրացի հայ գիւղերու վրայ քալեն և հիմնայատակ կործանեն. իսկ քաղաքին մէջ մնացածներուն ալ պատուիրեց, որ թալանի սկսեն:

Պատահած չարիքներուն ականատես մէկը կը շարի, կը մնայ թէ որ կողմէն սկսի պատմել:

— Հիմա՝ արիւնահեղութիւնք, լլկանք, հրդեհ, վերջապէս ամեն տեսակ ցաւ (որոնք Յաճկաստանի համար սովորական են) մեկդի ձգելով, վեր առնենք ակնարկով մը, հայ ժողովրդին վայելած անապահովութեան համար յուսահատութիւն դէպի ապստամբութեան դիմելու վերջնական շարժումներ:

Թողունք, որ այժմուս ընդունւած «կառավարութիւն» բառը մենք կը հասկնանք իբր քաղաքականացեալ աւազակութիւն և տիրող «օրէնքներն» ալ բըռնացիկ շահերնուն ծառայող լուր զէնքեր. — սակայն ասով հանդերձ, Յաճկաստանի մէջ կը տեսնուի բացարձակապէս թէ գտնւած ամեն պաշտօնէութիւնք բոլորովին անւանական են. ինչու որ տաճիկ տարրը բնականէն կուպիտ ու կըբոտ ըլլալուն՝ սուլթանական գազանային կամքին հետ միշտ կը կանխեն գծւած օրէնքներն:

Այո, այսպէս ըլլալուն՝ հայերուն համար մանաւանդ, ճշմարիտ իրաւունքի արդար բողոքներ յաւէտ անխելի կը մնային և պաշտօնեաներ միայն այն ատեն քիչ մը կը զիջան էին, երբ աւանդական կաշառքը իրենց մօտենար: Այսքանը ոչինչ: Հայ ժողովուրդը արդէն վարժւած անլուր կեղեքումներու, չէր կարող կամ չէր ուզեր բոլորովին ինքնամոռացութեամբ անիրաւութեան դէմ կենալ, եթէ բնաւ խղճի, պատուոյ, մտքի և հոգու մաքրութեան դէմ սոսկալի դաւաճանութիւններ տեղի չունենային սուլթանի որդեգիրներու կողմէ: Թողուրդը մը անհաճոյ հանգամանքներու ներքեւ, երբ կը նկատէ թէ իր գոյութեան իրաւունքը ոչնչանալու վրայ է՝ ստիպւած է սուրբ մարտ մը առաջ տանել:



Թէև դէմը ունենայ ամենաստոր բռնապետութիւն մը և մոլեռանդ իսլամ հասարակութիւն մը. երկդքին բոլորովին անընդունակ պահանջին կարևորութիւնը ըմբռնելու. երկուորեակ դժարութիւն մը, որոնց դէմ անպատճառ պէտք է պատուով կուել:

Թերևս ոմանք հարցնեն՝ թէ «կարելի չէ՞ր արդեօք համբերել և այսպէս չը կոտորել, քանի որ միւսլիման կառավարութեան վայրենութիւնները ծանօթ են»: Ո՛չ, ոչ:—Յ առաջ տարւած պայքարը միմիայն կը մղէր անտանելի ցաւերու կծու հոսանքէն. վշտակիր հայը միմիայն կրնար, մտածել սիրով մեռնել կամ լինել ազատած, որ շատ բնական է: 2է՛ր կարող բաց աչք տեսնել բռնութիւնը և գազանութիւնը.—իր բորբոքած կուրծքէն սկսաւ ժայթքել կայծ ու կրակ և ահա՛ այս կայծերն ու կրակներն են, որ մկրտեցան վերջապէս յեղափոխական սուրբ դրօշմով:

II

Արդ, երբ Տրապիզոնի Լ. Յ. Գաշնակցութեան Կօմիտէն կը տեսնէ ոճրագործ Բահրի փաշայի մը պատիւներ մատուցելը, այնպէս արիւնարբու հրէշի մը, որ Ասապուրականի մէջ միայն ցաւ ու տանջանք սերմանելով պատուհաս մը դարձած էր, կրնար դիմանալ ներկայացած դառն երգիծանքներու:—

Կը տեսնէր զինուորական Ֆէրիք Համտի փաշայ մը, որ իր նախագահութեան ներքև եղող ստորագասեալներով զինուորագրութեանց ատեն շատ զեղծունէներ կը բանեցնէր միշտ ի վնաս թուրք աղքատներուն, կրնար զայն ալ հանդիստ թողուլ, մանաւանդ երբ Բահրի փաշայի պէս սրիկայի մը պատիւ խնկարկելու առիթը կը ներկայացնէ:

Ի՛նչ պէտք է երկար խօսել. զանազան նկատողութիւններ, որոնք տաճիկ փաշաներու առանձնայատկութիւններն կը կազմեն, պատճառ եղան, որ 1895 թիւ Սեպտ. 20-ին երկու գաշնակցականներ զարկելով՝ վերաւորեցին զանոնք:

III

Կառավարութիւն ըսած չըկատողեր, երբ իր գործադրած ծայրագոյն միջոցներով իսկ չըկրնար գտնել երկու երիտասարդներն, ալ բարկացած էր, նեղած էր, փրփրած էր.—ծնաւ նոր և ահագին ռի մ'ալ բողոք հայերուն դէմ—ալ պէտք էր հայերն իրենց արմատէն վերցնել. հետեւաբար ջանաց սուր կերպով գրգռել կրօնամուլ իսլամներն. թուրքեր չեն հասկնար՝ թէ հայուն ջանքը նոյնպէս իրենց համար ալ է:

Հայերն որոշ կը տեսնէին թէ փոթորիկ մը ուշ կամ կանուխ պիտի փրթէր և լաւ կը նկատէին վալիին բռնած բոլորովին թշնամական գիրքը:

Ամեն տաճիկ պետական հրացաններով զինւած, առաջատի պէս հովեր առած էին.—Սեպտ. 22-ին գիշերը

մի քանի հայ թաղերու վրայ իրենց ըրած յարձակումներէն շատ նեղեցան և աւելի կատղեցան, երբ մէկ երկու օր վերջ քանի մը տաճիկներ թաղեցան՝ անոնք, որ երկու երիտասարդները հալածելու պատիւն ունեցած էին:

Սեպտեմբերի 25-ին կուսակալը իր դիմակը վար առած էր, անամթաբար հայ գիւղերու երեւելի երիտասարդները սուտ պատճառներով բերել տւած և բանտարկած էր: Ասահոգի խուժանը երես առած՝ սկսաւ խմբով փողոցները քայլել և գտած հայուն վրայ վազելով խուզարկել կամ ծեծել, այնպէս որ քաղաքին կեդրոնը՝ ոստիկանական խմբի մը առջև, ցերեկը, Արմենակ Ֆէթիմաճեան անուն պատանին տաճիկներէ պաշարելով՝ չարաչար կը ծեծկէր, այն ատեն միայն թող տրեցաւ, երբ մէկ քանի հայեր միջամտեցին:

Քաղաքին մէջ ապահովութիւն իսպառ վերցւած ըլլալուն, արդէն հայ և յոյն խանութներու ամենամեծ մասը դոցւած էին:

Սեպտեմբեր 27-ին թէև կսպսուէր արիւնահեղութեան մը, սակայն չէր կարծւեր՝ թէ Տրապիզոնի պէս ծոփեղծեայ տեղ մը Սասունի բաղդակից ըլլար. մանաւանդ որ շատեր առանց ո և է պատրաստութեան աներէն դուրս ելած էին:

Բայց քիչ ատենէն փողի ձայնն, զինուորներու ու պաշկոզուկներուն համաձայն շարժածքն շուտ մը ազնեցուց ամեն ոչ-իսլամներն:

Ի՛նչ անխմանալի լըբութիւններ, որ աշխարհի վրայ կար՝ կատարեցան անտէր հայու գլխուն, կը մնար կամ մեռնել, կամ կուել:

Ամեն կողմ կրակ և արեան լճակներ: Հայուհեաց իբր զէնք քարն ըլլալով՝ յանուն յեղափոխութեան 10 զոհեր տւին. իսկ այրերը, միասին հաշւելով գիւղացիներ և Հայաստանի ճանապարհորդներ, կը հասնին 975-ի: Հաշւէ դուրս են Կարնոյ և Տրապիզոնի մէջ եղող շատ մը անցորդ հայերու զուր կորուստը. որովհետև բոլոր պանդոկապետներու և անցքի վրայ գլուխող տաճիկ խանութպաններուն կառավարութեան կողմէ ջարդի համար մասնաւոր հրահանգներ տրւած էր:

IV

Մահ կամ Ազատութիւնը իբր նշանաբան ընդունողներէ զոհողներ բաւական ունեցանք. յիշե՛ք մէկ քանին:

Մկրտիչ Գարագաշեան, ուսուցիչ: Այս ազատութեան կարգապետը ծնած է 1872 թիւն, բոլորովին օգտակար և ազնիւ զարդ մը եղած էր ս. գործին, իր աւագ պարտականութիւնը սեպած էր կուել վաշխառուներու և բռնութեանց դէմ: Փողոսի սրճարանին վրայ պահուելով՝ հերոսաբար կուեցաւ և այնպէս ինկաւ:

Պողոս Կոթողեան, ծնած 1868-ին, խանութպան, ամբողջութեամբ օգտակար ըլլալու ձգտում ունեցող:

կուրի ատեն զինւորներէ գնդակահար եղաւ, ինկաւ:  
Պողոս Մալխասեան, ուսուցիչ, ծնած 1872-ին, շատ  
ժողովրդասէր, սիրելի էր իր մտացի և հանրագուտ ծա-  
ռայութիւններովը: Կիրժուայ աւանէն Տրապիզոն դառ-  
նալուն խուսմբ մը տաճիկներէ պաշարուեցաւ: Մինչև վեր-  
ջին րոպէն զիմադրեց ու այնպէս մեռաւ:

Պողոս Միքայէլեան, ծնած 1867-ին, վաճառականի  
գործակատար: Մէյտան-Թաղը, Հաճի Սիմօն, Ֆէթֆա-  
ճեանի տնէն իր ընկերներով գէմ դրաւ զինւորներու  
և ահագին բազմութեան մը, մինչև որ վերջին ոյժը  
հատաւ: Պողոս գեռ վիրաւոր՝ արիւնհարու կառավա-  
րութենէն հարցաքննուեցաւ և չը վարանեցաւ իր ազատ  
ու համարձակ պատասխաններով տաճկական աղտոտու-  
թիւնները երեսի տալ:

Եւ զեռ այսպէս շատեր, որը թողուլ և որը ընտրել:  
Չարմանալի էր տնանիլ կառավարութեան և տա-  
ճիկներու ընթացքը. — առատ զէնք, զինւորներ և բազ-  
մաթիւ հրոսակներ չէին բաւեր, երբ տեսան՝ թէ Իս-  
կէնտէր փաշայ թաղը վաճառական Հաճի Մարտիրոս  
Սրապեանի տնէն երկարատև և յամառ զիմադրութիւն  
մը տեղի կունենայ ու հինգ զինւոր ալ կիշնան, անա-  
մթաբար զօրանոցէն թնդանթ մըն ալ բերել կու-  
տայ տանը մօտ. սակայն աւանդ, որ արգէն ռազմամթերք-  
նին հատած էր: Կուղներէն միայն մէկ զօՏ. մնացած-  
ներն կապրին: Ալ գժւար կը թիւ փողոցներու կամ  
անկիւններու մէջ քաջութեամբ զիմադրողներու մղած  
կռիւր պատմել: Իրաւ որ հայերուն ոյժը միւսներուն հետ  
համեմատել կարելի չէ, սակայն ամեն մէկը յօժարու-  
թեամբ զոհուեցաւ և մե՛նք, մնացածնիս՝ երանի՛ կու-  
տանք անոնց:

Խ Ա Ր Բ Ե Ր Գ

Առէ 15 օր առաջ Խարբերդի գիւղերը ջարգել  
սկան: Նախ Շէյխ-Համաճի գիւղէն սկսան, բնակիչները  
կոտորեցին, ստացւածքները կողոպտեցին, տուները այ-  
րեցին՝ մոխիր դարձուցին: Աւերակ դարձան նաև Իչ-  
մէ, Հապուսի, Ախու, Կէօնիք և ուրիշ բոլոր հայ գիւ-  
ղեր, որոնց բնակիչները առանց հասակի և սեռի խըտ-  
րութեան կոտորուեցան: Թշնամին բոլոր ստացւածքները  
կողոպտելէն ետքը, քարիւղով յարգանոցները, խոտի  
մարագները և աթաբի (չոր թրիքի վառելիք) գէղերը  
կրակի տաւ: Այսօր այդ 200, 300, 450 տնւոր գիւ-  
ղեր այն աստիճան հիմնայատակ եղած են, որ տեղեր-  
նին անգամ յայտնի չէ: Այդ գժբախտ գիւղերը շա-  
րաթ մը շարունակ այրեցան, մուխը մառախուղի պէս  
պատած էր ամեն կողմ:

Թէ Խարբերդի, թէ՛ Բալի և թէ՛ Չարսանջակի

գիւղերէն մէկ հատ հայու գիւղ չէ մնացած, բոլորն  
ալ մոխրակոյտ եղած են, իսկ բնակիչները մեծ և փո-  
քրը ջարդուած: Քանի մը հոգի միայն մօրէ մերկ փա-  
խան, որ կեանքերնին ազատեն, բայց անոնք ալ ճաւ-  
բան չարաչար սպանուեցան: Մէկ մասն ալ ճարահա-  
տեալ մահմեդականութիւն ընդունեց:

Մահմեդական և հայախառն քանի մը գիւղերու տու-  
ները չայրեցին, բայց ինչքերը ամբողջովն կողոպտե-  
ցին և բնակիչները սուրէ անցուցին. իսկ փախչողները  
մերկ ու անթի կը թափառեն: Մէկ քանիին մահմե-  
դականները պաշտպան կանգնեցան, բայց ետքը զանոնք  
մահմեդական դարձուցին:

Խոյլու, Խաղբմ, Քէօրիէ, Պիզվէն և Սիւրսիւրի գիւ-  
ղերը այնպէս աւերակ ըրին, որ հիմա տեղերնին ան-  
գամ յայտնի չէ. մարդ կը վարանի հաւատալ՝ թէ  
հոն երբէք գիւղեր կային: Բալու ասիէ աւելի գէշ  
ըրին, մէկ հատ հայ ողջ չեն թողուցած, Խարբերդ քա-  
ղաքը բաղդատարար աժան պրծաւ, թէպէտ ամբողջ-  
ովն կողոպտուեցաւ: Բայց շատերը կեանքերնին ազատե-  
ցին կամ մահմեդականներու տուներ ապաստանելով և  
կամ մահմեդականութիւն ընդունելով, այս վերջինիս  
հետեւողները օր ըստ օրէ կը շատնան, վասն զի ապրե-  
լու ուրիշ ճար չկայ:

Հիւսէյնիկի մէջ 300 հայ սպանուած է, 300-ի չափ  
ալ վիրաւորուած: Տուները ամբողջովն կողոպտուած են,  
բայց չեն այրած: Պատճառը սա էր, որ ողջ մնացողնե-  
րը ամբողջովն մահմեդականութիւն ընդունեցին. քրիս-  
տոնեայ անունը կրող հայ բնաւ չկայ: Տասը օրէ ի  
վեր հիւսէյնիկից հինաւուրց մահմեդականներու պէս  
կանոնաւոր կերպով մզկիթ կերթան նամազ ընելու:

Քէսիրիկ ալ բոլորովն աւրչակելէ ետքը ժողովուր-  
դը մահմեդական եղաւ:

Խարբերդ քաղաքին այն գեղեցիկ թաղը, որ Տալ-  
Գարուէն եղած ատենդ կերևի, բոլորովն կողոպտուելէ  
ետքը, 8-10 տուն քարիւղով կրակ տւին, ամբողջ թա-  
ղը մոխրի վերածեցին. հրդեհը 6 ժամ տևեց: Քա-  
ղաքին մէջ շատ հայ չի ջարդուեցաւ, միայն 100-ի  
չափ սպանուած, 150-ի չափ ալ վիրաւորեալներ կան:  
Ողջ մնացողներուն շատերը մահմեդականութիւն ընդու-  
նելով ազատեցան: Հաւատափոխներէն շատերը աղքատ,  
ծեր, խեղճ մարդիկ են. աչքի երևցողներէն հազիւ մէկ  
երկու հոգի մահմեդական եղած են, որոնցմէ մէկն է  
Ատանալեան Յարութիւն. սա շատ հարուստ ըլլալով  
բոլոր ինչքը կողոպտուեր է:

Քաղաքը կողոպտողները այնչափ շատ բան ունէին  
հետերնին տանելիք, որ շատեր չէին կրնար շալկել,  
ուստի ստիպուած էին յաճախ թանկագին բաները ա-  
ժան աժան ծախել, այնպէս որ երեք ծրար(թօփ) չու-  
խան 25 դահեկանի ծախուեր է. մինչդեռ իսկական գինը  
10-15 ոսկիէ պակաս չէ:

Դեռ Մէզիրէ չէ կողոպտուած. Մուստաֆա փաշա չի



Թողուր եղեր: Բայց բոլորտիքը տաճիկ ամբօրը պաշարած է. փաշան անոնց «դեռ կեցէք» կըսէ եղեր:

Փաշայի այդ վարմունքը գաղտնիք մը է մեզի համար:

Խարբերդէ (30 Հոկտեմբ.)—կը գրեն թէ գիւղերն ու քաղաքը արիւնով ու կրակով շողախւած են. Ամբրիկեան միսիօնարներու ութ շէնքերն ալ այրւած, թալանւած են:

### Բ Ա Ս Ե Ն Ի Գ Ի Ի Ղ Ե Ր Ի Ա Ի Ե Ր Ո Ւ Մ Ը

Բարենորոգումները Տաճկահայաստանին մէջ տակաւին կը շարունակին. «բարեգուլթ սուլթանին» շնորհիւ Պոլսոյ, Տրապիզոնի, Երզնկայի կոտորածներէ վերջ, տաճիկ կառավարութիւնը քիւրդին հետ ձեռք ձեռքի տրւած սկսեց ելնել հայ ժողովուրդին դէմ՝ աջ ու ձախ կոտորել, թալանել ու ոչնչացնել հայ գիւղերը. Կարիւնից միայն սարսափելի լուրեր են գալիս. երթեկեկութիւնը բոլորովին ընդհատուած է. եթէ լսուով է այս կամ այն գիւղի ոչնչացումը, կոտորածը, այն էլ թուրքերից, քիւրդերից է լսուում: Բասենի Հարսնքար, Իշլուս, Իոզվերան, Էգեպատ, Հերթա, Քրդապաղ, Տօրի, Ճրասոն, հայ գիւղերու ինչքը, ոչխարը, տաւարը, վերջապէս մինչև անգամ հաւերն էլ կողոպտելով տարել են: Հայ գիւղացիք ճարահատեալ ցիր ու ցան են եղել, ոմանք ապաստանելով հայ գիւղեր, ոմանք քիւրդ գիւղեր: Խեղճ ժողովուրդը մշուշի մէջ մոլորւած կռուների նման փախչում և էլի թշնամոյն ճանկն է ընկնում: Իոզվերան գիւղացիք, երբ ցիր ու ցան եղան, երկու օր յետոյ մի քանիսը վերադառնալով, երբ կը ջանան մի քանի բեռ հաց հասցնել իրենց թշուռ զաւակներին, քիւրդերը յարձակում գործելով չորսը կապանեն և մնացածները հազիւ հազ կազատին: Ճրասոն գիւղը կողոպտելու ժամանակ կապանի Քերովը անուն հայն: Ամեն մի արիւնարբու քիւրդ ցեղապետ պատրւակ բռնելով թէ կառավարութիւնը զիրենք յատկապէս ղերկել է հայերի պահպանութեան համար, հայ գիւղի մէջ մտնելով լուր են ուղարկում թուրքերին և քիւրդերին շուտով գալ և աւարել:

Արթարանը դեռ չը բացւած խեղճ գիւղացին կը տեսնէ շքապատուած ահագին սովալլուկ գազաններով: Այսպէս կասքանցի քիւրդ ցեղերի ցեղապետը՝ Ռեշիդ պէյ պահպան լինելու պատրւակաւ մտնելով Տօրի գիւղը, շրջապատել կը տայ իւրայիններով: Ռեշիդ պէյը, սարսափ պցելով գիւղացիների վրայ, կըսէ՝ «Ձեր մէջ կան յեղափոխականներ, եթէ կը յանձնէք՝ ձեզ համար ոչինչ չկայ»: Գիւղացիք երբ կը պատասխանեն՝

Թէ «ոչ որ չկայ մեր գիւղը», կսկսեն իրենք գիւղից և իրենց ընկերները դրսից գիւղը կրակ տալ: Ժողովուրդը ճարահատեալ կը թողու իւր տուն ու տեղը, կայքը ու ինչքը և կսկսի փախչել դէպի Տէլի-Պապէ գիւղը: Բայց այդ արիւնարբու թշնամիք աւարտութեամբ, հայի քրտանց աշխատութեամբ չը բաւականանալով կսկսին կանանց ու աղջկերանց ետևէն հետամուտ լինել և հրացանի գնդակները կարկուտի պէս տեղացնել: Կանանց ու աղջկանց, մանր երեխաների ողբն ու աղաղակը քարեր կը թնդացնեն, որք թողով իրենց մատղաշ զաւակունքը՝ կը փախչեն. վերջապէս հազիւ կը հասնեն Տէլի-Պապէ հայ գիւղն, որի շրջակայքը հայդուկներն էին ըռնել: Քիւրդերը այդ գիւղից եօթանձ բռնելով՝ գերի են տարել և չորսը վիրաւորել են:

\* \* \*

Քէմախէն կը գրեն՝ Երզնկայի 2 թւականաւ Օվաճուղի քրդերը պետական զէնքերով եօթն անգամ յարձակեցան Հազարք գիւղին վրայ, սներն թալանեցին և ի միջի այլոց սպանեցին երեւի յաղթանդամ և քաջ Մեզէյ էֆ. Ադամը: Հաւաստի լուրեր կիմացնեն, թէ Ամասեայի մէջ եղած կոտորածին 1000 հայ սպանւած է, իսկ Մարզանի մէջ 500:

Շատ տեղերէ եկած նամակներ սովի վրայ կը գրեն. ասեն մը կարողութեան տէր եղող անձինք՝ չկրնալով հիմայ մուրալ կամ գողնալ, ցուրտէն և այլևայլ տառապանքներէ կը մեռնին:

Վ. Պոլսի Դաշնակցական Ազգայնական Կոմիտէի անցեալ շաբաթ հրատարակած № 4 «Թուրքիկ թերթից» քաղում ենք հետևեալը.—

«...Մեր ժողովուրդի մեր դատի ոչնչացման այս չարագուշակ բռնութիւնն առջեւ Եւրոպան կը յորդորէ մեզ լսել ու համբերելու Բայց ի՞նչ արդիւնք ունեցաւ մեր լուծիւնը Մասունի կոտորածէն ետքը: Չէ՞ որ պատրիարքը տարիէն աւելի է, որ ամեն օր կը բողոքէ, ո՞վ լսեց. Ո՛չ, լալով բան չըլլար, մեր արցունքը ծաղրեցին մինչև հիմա, Մասուն կողտորուեցաւ, համբերէք ըսին: Տրապիզոնի համալուարը ջարդը եղաւ, համբերեցէք ըսին: այսօր բովանդակ Հայաստան արիւն կուլայ եւ դեռ համբերել կը յորդորեն մեզ ի՞նչ, այնչափ ակներու, լոյսի պէս պայծառ իրողութիւններէն ու փաստերէն ետքը, երբ Եւրոպան դեռ չուզեր ճանչնալ արիւնկզակ սուլթանին անմիջական հեղինակն ըլլալը այդ ոճիրներուն.— ալ ի՞նչ կապանէք անոնցմէ: Յոյսերնիդ մի՛ դնէք Եւրոպայի վրայ, մարդասիրութիւն բառը դողութիւն չունի անոնց բառաբանքին մէջ: Մեր ապաւէնը յեղափոխութիւնն է, այն միակ միջոցը, որ կեանք տուաւ իսալիային, Յունաստանին, Սերբիային, Չեռնոգորիային ու Բուլղարիային:

Համբերել, այսուհետեւ մահ է մեզի համար»

Վրէժ ու զէնքով պատասխան մեր գոյութեան թշնամիներուն, ահա այն միակ գործնական ճամբան, որուն վրայ կոխեց Ձէյթունը ասպտամբութեան դրօշակը պարզելով Տաւրոսի բարձունքներուն վրայ:

Ձէյթունի քաջերը, որոնք եւ ո՛չ մէկու դասերուն կը կարօտեն ազատութեան պահանջը ըմբռնելու կամ հրամանին ոտքի եղնելու համար.— Կիլիկիոյ մէջ եւս սկսան կոտորածներէն կատարած, նորէն գլուխ բարձրացուցին եւ առաջին անգամէն գերի բռնեցին 600 պահարկ զինուորները այն նշանաւոր բերդին, որ վատ հայու մը Յովհաննէս Նուրեանի դաւաճան խորհուրդովը շինել տուած էր թուրք բռնապետութիւնը Ձէյթունի սրտին մէջ: Ամբողջ աշխարհ տակն ու վրայ եղաւ Ձէյթունցոյ այդ յաղթանակէն, բայց ասոնք եւ դաս մը ալ որ տակն թուրքերուն, գործով ապացուցանելով իրենց քաղաքակիրթ ազգի մը զաւակն ըլլալը, մարդավարութեամբ վարուեցան այն գերի զինուորներուն հետ, որոց ընկերները անպաշտպան տղաքն ու կիները լլկած ու սպանուած էին:

Հոն դարձած են հիմայ Եւրոպայի ու Թուրքիոյ սարսափած աչքերը, ցորչափ Ձէյթուն յաղթական շարունակէ մնալ իր անառիկ լեռներուն վրայ, ո՛չ թուրքիան եւ ո՛չ Եւրոպան պիտի կրնան Հայկական դատը մարելու եւ ահա այդ ըմբռնելով ամեն միջոց կը գործածուի զինաթափ ընելու Ձէյթունը...

Բայց ո՛չ Ձէյթուն պէտք չէ որ նուաճուի եւ չպիտի նըլաճուի...

Կեցցէ՛ Ձէյթուն, կեցցէ՛ ասպտամբութիւն Հայի՛ր, օգնեցէ՛ք Ձէյթունին:՝

դիմասէր 100 դճ., Մասիս 40 դճ., Հարած 10 դճ., Կեռսա 10 դճ., Յորեն 10 դճ., Ղ. Ստեփան 10 դճ., Մ. Ն. 10 դճ., Մ. Բ. 20 դճ., 2. Ի. Կ. 10 դճ.:

Հայկաւանէն.— Առիւծի խմբէն 7 մէճիտ, Հայաստան 1 մէճիտ, Վահէ 1 մէճիտ, Սէնթրէմէքէ խմբէն մէկ քառորդ օսմ. ոսկի, Սանուց քաղաքի Պարզ խմբէն 3 մէճ., Վրէժ 1 մէճիտ:

Օձէն.— Կ. Ա. 108 դճ., Մուր 112 դճ., Խարիսի 324 դճ., Տոմար 1080 դճ., Գրիչ 540 դճ., Անշան մէկը 20 դճ., Թնդանօթ 30 դճ., Շանթ 50 դճ., 20 փր., Կայծակ 216 դճ., Անի 100 դճ., Կամաւոր 20 դճ., Մահ 108 դճ., Մարկոս Մարկոսեան 3240 դճ., Անանուն 40 դճ., Ճերմակ 100 դճ., Արշալոյս 540 դճ., Հայասէր 80 դճ., Սիրանոյշ 324 դճ., Մելան 540 դճ., Աթոռ 30 դճ., Յոյս 20 դճ., Հաւատք և Յոյս 540 դճ., Կարապետ 540 դճ.:

Քուշանաց քաղաքէն.— Ստեփան Պետրոս 40 դճ., Ս. Շ. 55 դճ., Ն. Բ. 40 դճ., Տ. Պղինձ 20 դճ., Նուպար Պարսիկ 200 դահեկան:

Պէպիտիէր քաղաքի Հայ ուսանողներից 65 ֆրանկ: Բ. քաղաքի Հայ ուսանողներից 250 մարկ:

Ղրիպակներ.— Անցեալ տարւոյ ՄՁ 20-ի մէջ սպաւած է «Նարինշ 540 դճ.» պիտի լինի՝ Ոչինչ 540 դճ.: ՄՁ 21-ի մէջ՝ «Նապալայ 35 օսմ. ոսկի և 5 ոսկի թղթագրամ» պիտի լինի՝ 35 օսմ. ոսկի, 5 ոսկի թղթագր. և 9 անգլ. ոսկի:

Տեղի խիստ սղութեան պատճառով անկարող լինելով զետեղել «Գրօշակի» մէջ Կարինի կոտորածին վերաբերեալ մեր ստացած մի քանի այլ տեղեկագրերը, մենք այդ լոյս կընծայենք առանձին գրքովով:

\*\*\*

Թիւրիմացութիւնների տեղիք չտալու համար, ստիպուած ենք մեր նոր հասցէն դարձնել «ԱՐՄԵՆ-ԳԱՍՊԱՐ» որի վրայ հրաւիրում ենք առանձին ուշադրութիւն:

Խմբագրութեան հետ թղթակցողներից խնդրում է բացառապէս դիմել այդ նոր հասցեով:

Դաշնակցութեան անժամօթներից խնդրում է թղթակցութեան եւ ներխուսուութեան համար դիմել:

Armène-Gaspar, poste restante, Carouge (Suisse).

L. Boole, 15, Augustus Rd. Hammersmith, W. London.

Վիեննա, Դաշնակցութեան ազատ սպարան:

ՆՆՆՐԱՏՆՈՒԹՅՆՆԵՐԻ ՅՈՒՑԱՎՈՐ

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Անտրոնական սնդուկին մէջ ստացւեցան.

Մ. Մ. 50 օսմանեան ոսկի, Այգեստան 175 ռուբ., Ն. Կ-ից 25 ռուբ., Այգեստանի Մար-Շիմոնից 20 ռուբ., Ոսկանապատ 1000 ռուբ., Դ. Ջ-նի մի խումբ կանանցից 40 ռուբ., Թ. ք. մի խումբ մարդկանց ձեռքով հանգ. 500 ռուբ., Հ. Վ. 50 ռուբ., նոյն տեղից կանանց ձեռքով հանգ. 33 ռուբ.:

Արմ. ք-ից 100 ռուբ., Վ. ք-ի Գինեգործից 250 ռուբ.:

Գետակ քաղաքի Հոսանքից 25 ռուբ. 80 կոպ.:

Արշակաւան քաղաքի Անտրոնական սնդուկին մէջ ստացւած են.

Վարդանեան խ. 20 դահեկան, Արշայր խ. 60 դճ., Իերձակ 20 դճ., Հայուհի 20 դճ., Ազատական խ. 20 դճ., Արծիւ խ. 50 դճ., Մկրատ 20 դճ., Ծաղիկ խ. 70 դճ., Արակ խ. 70 դճ., Պայթուցիկ խ. 10 դճ., Գործիք խ. 10 դճ., Օշին խ. 25 դճ., Արիս 20 դճ., Իրինա 10 դճ., Պետրոս 20 դճ., Մ. Ֆ. 10 դճ.:

Վիշապ քաղ. կեդր. սնդ. մէջ ստացւած են.

Սէր 20 դճ., Սև-Կարմիր 22 և կէս դճ., Յաւաջա-